ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի 2008թ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքների մասին

1. 2008թ. ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի կարևորագույն արդյունքներից կարելի է առանձնացնել հետևյալը.

ա) Որպես հեղինակային կոլեկտիվ՝ կենտրոնը ստեղծել և պատվիրատուին (Գյումրու քաղաքապետարանին) է հանձնել «Գյումրի. քաղաքը և մարդիկ» գիտահանրամատչելի պատմազգագրական ուսումնասիրությունը՝ 20 հրատարակչական մամուլ ծավալով:

բ) Հրատարակվել է կենտրոնի «Գիտական աշխատություններ» ամենամյա ժողովածուի XI հատորը՝ 12.5 հրատարակչական մամուլ ծավալով:

գ) 2008թ. պեղումներով Հայկաձորի քարանձավային բնակավայրում բացվեց պատերի կանոնավոր շարվածք ունեցող նոր բնակելի համալիր (X-XIII դդ), նաև երկու նոր քարանձավներ Ախուրյանի կիրճի ստորին հատվածում: Հայտնաբերվել է նոր հնագիտական հուշարձան՝ միջնադարյան եկեղեցու մնացորդներ Գյումրի-Ամասիա ավտոմայրուղու Մարմաշեն-Վահրամաբերդ հատվածում, բացվել են նոր դամբարաններ Շիրակավան, Կապս և Լուսաղբյուր գյուղերում (մ.թ.ա. 8-6-րդ դդ):

դ) Ավարտվել են Մեծ Սեպասարի վաղբրոնզիդարյան տաճարական համալիրի պեղումները, որ նոր լույս են սփռում Շիրակում վաղբրոնզիդարյան հասարակության կյանքի, կենցաղի, հավատալիքների և նյութական մշակույթի բազմաթիվ հարցերի վրա:

ե) Պատրաստվել է հրատարակման «Խաչը թիկունքիս, Յոթվերքը՝ սրտիս» վերտառությամբ աշխատությունը՝ Շիրակի մերօրյա բանահյուսության նմուշներով, բանասացների կենսագրական տվյալներով և հարուստ բառարանով (6 հրատ մամուլ):

զ) Պատրաստվել է հրատարակման «Ալեքսանդրապոլի գավառի պատմությունը թվերով» արխիվային փաստաթղթերի երկհատոր ժողովածուի առաջին հատորը (10 հրատ. մամուլ):

3. 2008թ. ՇՀՀ կենտրոնում ամբողջությամբ իրականացվել է բազային ֆինանսավորմամբ «Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ» գիտական թեմայի (ղեկ. բ.գ.դ., պրոֆեսոր Ս. Հայրապետյան) չորրորդ տարվա համար ծրագրավորված աշխատանքը: Թեմայի կատարման մեջ ներգրավված են կենտրոնի 13 գիտաշխատողներ, և ուսումնասիրությունները տարվում են երեք ուղղություններով՝ Շիրակի պատմագիտություն, հնագիտություն և բանագիտություն:

- Հաշվետու տարում ծրագրի շրջանակներում զգալի աշխատանք է կատարվել մարզի տարածքի հնագիտական ուսումնասիրության ուղղությամբ: Հայտնաբերվել են միջնադարյան նոր եկեղեցու մնացորդներ Վահրամաբերդ գյուղի մոտ, բացվել է նոր դամբարանադաշտ Կապս գյուղից հյուսիս, ուսումնասիրվել են շինարարական աշխատանքների պատճառով բացված դամբարաններ Շիրակավանում: Գյումրի-Երևան մայրուղու Ազատանի հատվածում խումբը բացել է սալարկղային դամբարանադաշտ (մ.թ.ա. 8-6-րդ դդ.)՝ հարուստ հնագիտական նյութով (մետաղյա իրեր, խեցեղեն): Սրան զուգահեռ՝ շարունակվել են պեղումները նաև Հայկաձորի քարանձավային բնակավայրում և Մեծ Սեպասարում: Հայկաձորի քարանձավային բնակավայրում դեպի գետն իջնող հատվածում պեղումներով բացվել են ավազաքարային շերտում գտնվող երկու քարանձավներ՝ խեցեղեն գտածոներով (9-10-րդ դդ.): Փրկարարական պեղումներ իրականացվեցին նաև Լուսաղբյուր և Քեթի գյուղերում պատահականորեն բացված դամբարաններում: Խումբը նաև օգնել է Շիրակն ուսումնասիրող ֆրանսիական արշավախմբին (ղեկ.՝ Ժան Պիեռ Մահե): Կատարվում են պեղումներով ձեռք բերված նյութերի մաքրման, կոնսերվացման և վերականգնման աշխատանքներ: Հնագետների խումբը հրատարակման է հանձնել 4 գիտական հոդվածներ:
- Հաշվետու 2008թ. կենտրոնում շարունակվել է պլանավորված աշխատանքը Շիրակի հնագույն շրջանի պատմության, մասնավորաբար մ.թ.ա. I հազարամյակի Ախուրյանի ավազանի ցեղային երկրների տեղադրության, քաղաքական պատմության, բնակչության հոգևոր, մշակութային և էթնիկական զարգացումների մի շարք անհայտ դրվագների բացահայտման և դրանց գիտական մեկնաբանության ուղղությամբ: Այս հարցում խմբի կողմից կարևորվել են ոչ միայն ուրարտական, այլև ասորեստանյան թագավորների (մասնավորաբար Թիգլաթփալասար I-ի) արձանագրությունները: Նոր աղբյուրագիտական փաստերի հիման վրա խումբը հիմնավորում է նախկինում առաջ քաշած այն տեսակետը, որի համաձայն՝ Ախուրյանի ավազանի ու նրա հարող տարածքների մեծ մասի բնակչությունը էթնո-լեզվական հայեցակետից մ.թ.ա. I հազարամյակում հիմնականում հնդեվրոպական էթնիկ տարր էր՝ այդ տարածքում հայության ուղղակի նախնիները: Այս ուղղությամբ 2008թ. կատարված ծրագրային աշխատանքն ամփոփված է հրատարակված 3 և տպագրության հանձնված 8 աշխատանքներում: Հաշվետու տարում պաշտպանվել է նաև մեկ թեկնածուական ատենախոսություն (Լ.Պետրոսյան) «Մեծ Հայքը Երվանդունյաց դարաշրջանում (մ.թ.ա.4-3-րդ դդ.)»:

- Բազային ֆինանսավորմամբ ՇՀՀ կենտրոնում իրականացվող «Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ» ծրագրի շրջանակներում շարունակվել է նաև տարածաշրջանի գյուղերում գրառված բանահյուսական հարուստ նյութի (ժողովրդական աղոթքներ, հմայություններ, գուշակություններ, հավատալիքներ, սնահավատություններ և այլն) վերլուծությունը: Շարունակվել է աշխատանքը Շիրակի տարածքում ծիսական արարողությունների նշանակությունը, բնույթը, բովանդակությունն ու սիմվոլանշանային համակարգը ամբողջականացնելու ուղղությամբ: Պատրաստվել է հրատարակման «Խաչը թիկունքիս, Յոթվերքը՝ սրտիս» վերտառությամբ աշխատությունը՝ բանաձևային բանահյուսության նմուշներով, բանասացների կենսագրական տվյալներով, հարուստ բառարանով և ներդիրներով: Խմբի 2008թ. կատարած աշխատանքն ամփոփվել է հանրապետական 2 գիտաժողովներում արված հաղորդումներով և 3 գիտական հոդվածներով, որոնք հանձնված են տպագրության:
- Հաշվետու ժամանակաշրջանը անդրանիկ տարի էր ՇՀՀ կենտրոնում թեմատիկ ֆինանսավորմամբ կատարվող երեք գիտահետազոտական եռամյա ծրագրերի համար.

«Ալեքսանդրապոլի գավառը XIX դարի վերջին քառորդին և XX դարասկզբին» թեմայի (ղեկավար՝ պատմ. գիտ. թեկնածու Ա. Հայրապետյան) կատարման առաջին տարում ավարտին է հասցվել Ալեքսանդրապոլի գավառի XIX դարավերջի ժողովրդագրական դրությանը, հասարակական կազմակերպությունների գործունեությանը և XIX դար 70-ական թվականներին գավառում ստեղծված «Բարենպատակ ընկերություն» և «Հայրենիքի սիրո գրասենյակ» ազգային ազատագրական խմբակների գործունեությանը վերաբերող արխիվային նյութի հավաքչական աշխատանքը ՀՀ Ազգային արխիվում, ԳԱԱ ՊԻ արխիվում, Ազգային գրադարանում, ԳԱԱ Ֆունդամենտալ գրադարանում, Գյումրու «Կումայրի» արգելոց-թանգարանում ու Ժողովրդական ճարտարապետության և կենցաղի թանգարանում պահվող բացառիկ կարևորություն ներկայացնող ֆոնդերից: Սկսվել է Ալեքսանդրապոլի մշակութային կյանքի և մասնավորապես կերպարվեստի պատմության ուսումնասիրությունը (Գ.Բրուտյան, Յու. Վերժբիցկայա-Դարբինյան և ուրիշներ): Թեմայի շրջանակներում 2008թ. կպագրվել են 7 և հանձնվել են տպագրության 9 աշխատանքներ:

«Շիրակի բանավոր ավանդույթի պրոֆեսիոնալ երաժշտությունը պատմաքննական լույսի տակ» թեմայի (ղեկավար՝ արվեստագիտ. թեկնածու Հ. Հարությունյան) կատարման առաջին տարում արվել է հավաքչական բնույթի հետևյալ աշխատանքները. Ձայնագրվել են աշուղական սիրավեպերից երգեր Գյումրիում և Շիրակի մարզի գյուղերում, ձայնագրվել են նաև աշուղ Շահենի 1970-80-ական թթ. Լենինականում գործող աշուղական դպրոցի ներկայացուցիչների՝ Դվալի Մուկուչի, Համիկի, Ռազմիկի, Կոշտոյի երգերը, ձեռք են բերվել նրանց երգերի բանաստեղծական տեքստերի ամբողջական ժողովածուները /դավթարները/: Կատարվել են նաև մուղամների նոր գրառումներ: Լրացվել են աշուղ Շերամի և Իգիթի ֆոնդերը: Ձեռք են բերվել նյութեր, որոնք հնարավորություն են տալիս ձևավորելու նորօրյա աշուղների անձնական արխիվները, սկսվել է կոմպոզիտոր, երաժշտահասարակական գործիչ Արտաշես

Ներսիսյանի անձնական արխիվի մշակումը: Հաշվետու տարում թեմատիկ խումբը հրատարակել է 8 և հանձնել է տպագրման 2 գիտական հոդվածներ ու հրապարակումներ:

«Գյումրի-Ալեքսանդրապոլ-Լենինականի առաջնային արտադրության և կենսապահովման մշակույթը» թեմայի (ղեկավար՝ պատմ. գիտ. թեկնածու Կ. Բազեյան) շրջանակներում կատարվել է սկզբնաղբյուրների մշակման աշխատանք, ուսումնասիրվել և հոդվածների ձևով ներկայացվել են Ալեքսանդրապոլի բնակչության հիմնական զբաղմունքները՝ արհեստներն ու առևտուրը, կենսապահովման մշակույթի առանձնահատկությունները, բնակարանը և բնակարանային համալիրները, կահույքը, կարասին, հագուստի համալիրը, սննդի համակարգը և դրանցում կատարված փոփոխությունները: Այդ նպատակով մշակվել են ՀԱԱ Շիրակի տարածքային բաժնի արտադրատնտեսական ու ժողովրդագրական արխիվային փաստաթղթերը, կատարողների դաշտային գրառումները և Շիրակի մարզի քաղաքային և գյուղական բնակավայրերի վերաբերյալ պատմազգագրական, աշխարհագրական ու այլ բնույթի համաժամանակյա և տարաժամանակյա բազմաթիվ նյութեր ու փաստական տվյալներ: Հաշվետու ժամանակաշրջանում խմբի կատարողները տպագրության են հանձնել թեմային վերաբերող 10 գիտական հոդվածներ, հրապարակումներ և հաղորդումներ (2-ը տպագրվել են), մասնակցել են 1 միջազգային և 2 հանրապետական գիտաժողովների: Պաշտպանվել է նաև թեկնածուական ատենախոսություն՝ «Լենինական-Գյումրիի բնակչության շարժընթացը 1950-2000թթ» թեմայով, որն ուղղակիորեն առնչվում է խմբի կողմից ուսումնասիրվող գիտական հիմնախնդրին:

4. ՇՀՀ կենտրոնի կողմից 2008թ. հրապարակումների ցուցակը

Մենագրություն (ձեռնարկ)՝

1. Պետրոսյան Ս.,Հայոց մեհենագրության ակունքներում, «Դպիր» հրատարակություն 2008, 108 էջ:

Հոդվածներ՝

1. Պետրոսյան Ս., «Գորգի, Բանան և Դավիթ» եռյակը եռադասության տեսանկյունից, «ԳՊՄԻ հանրապետական գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու», Գյումրի, 2008:
2. Պետրոսյան Ս.,Մի զարմանալի անտեղյակության առթիվ, ՊԲՀ, 2008, թիվ 1:
3. Պետրոսյան Ս.,«Գիլգամեշը և խուլուպպու ծառը» վիպերգի հնդեվրոպական-հայկական բաղադրատարրը, ՊԲՀ, 2008, թիվ 3:
4. Պետրոսյան Ս.,Պատմականը՝ Զարմայր նահապետի մասին ավանդազրույցում, «ԳՊՄԻ հանրապետական գիտական նստաշրջան՝ նվիրված երկրաշարժի զոհերի հիշատակին», Գյումրի, 2008թ., դեկտեմբեր, (0.3 հրատ մամուլ, հանձնված է տպագրության):
5. Պետրոսյան Ս.,Հացազգիների մշակության արտացոլումը Բարշամի պաշտամունքում, «ԳԱԱ ՇՀՀԿ գիտ. աշխատություններ», XI, Գյումրի, 2008, (0.5 հրատ մամուլ, հանձնված է տպագրության):

6. Պետրոսյան Ս., «Գյումրի» գրքում (տպագրվում է քաղաքապետարանի հովանավորությամբ) Շիրակի հին և վաղմիջնադարյան պատմությանը նվիրված մասը, (1 հրատ մամուլ, հանձնված է տպագրության):
7. Պետրոսյան Ս.,Կրկին «Վահագնի երգի» մասին, «Արվեստ և ժամանակ. հայացք Գյումրուց» ամսագիր, 2008, (0.4 հրատ մամուլ, հանձնված է տպագրության):
8. Պետրոսյան Լ., Հայաստանի սատրապ Օրոնտես-Երվանդի փոխհարաբերությունները դիադոքոսների հետ, «ԳՊՄԻ հանրապետական գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու», Գյումրի, 2008:
9. Պետրոսյան Լ., *Արշակ* անվան Հայաստանում կիրառվելու ժամանակի և ոլորտի մասին, «ԳՊՄԻ հանրապետական գիտական նստաշրջան՝ նվիրված երկրաշարժի զոհերի հիշատակին», Գյումրի, 2008թ., դեկտեմբեր, (0.5 հրատ մամուլ, հանձնված է տպագրության):
10. Պետրոսյան Լ., Երվանդ Վերջինի քաղաքական մեկուսացումը և վախճանը, ԳԱԱ ՇՀՀԿ «Գիտական աշխատություններ», h. XI, (0.3 հրատ մամուլ, հանձնված է տպագրության):
11. Հայրապետյան Ս., Գրաբարի ուսուցման հարցեր, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», h. XI, (0.7 հրատ մամուլ, հանձնված է տպագրության)
12. Հայրապետյան Ս., Մեթոդական խորհուրդներ գրաբարի ուսուցչին, «Հայոց լեզու և գրականություն»,1,2009, (0.5 հրատ. մամուլ, հանձնված է տպագրության)
13. Հարությունյան Հ., Զարուհի Դոլուխանյան, «Արվեստ և ժամանակ», Գյումրի, 2007 N2-3, էջ 5-7:
14. Հարությունյան Հ.,.Արաքսի Գյուլզադյան, «Արվեստ և ժամանակ», Գյումրի, 2008 N1-2, էջ 8-10:
15. Հարությունյան Հ.,Պատկերներ Ալեքսանդրապոլի երաժշտական կյանքից, Գյումրի, 2008 N3, էջ 12-17:
16. Հարությունյան Հ.,Հասմիկ Ափինյանի հիշատակին, «Արվեստ և ժամանակ», Գյումրի, 2008 N3-4, էջ 42-45:
17. Հարությունյան Հ., Ալեքսանդրապոլը հայ-ռուսական երաժշտական մշակույթների խաչմերուկ, «Հայ-ռուսական մշակութային կապեր միջազգային գիտաժողովի նյութեր, Գյումրի, 2008, էջ 105-110:
18. Հարությունյան Հ., Մուղամների մշակումները Նիկողայոս Տիգրանյանի ստեղծագործության մեջ, «Գեղարվեստական միտք», Երևան, 2008, էջ 21-28:
19. Հարությունյան Հ.,Ալեքսանդրապոլի երաժշտական կյանքը, ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», Գյումրի, 2008 (1.5 հրատ մամուլ, հանձնված է տպագրության)
20. Հարությունյան Հ., Գրիգոր Մագիստրոսը երաժշտապետ, «Մանրուսում» միջազգային երաժշտագիտական տարեգիրք, Եր., 2008, (0.3 հրատ մամուլ, հանձնված է տպագրության) :

21. Հայրապետյան Ա., Ժողովրդագրական գործընթացները Փամբակի գավառակում XIX դարի առաջին քառասնամյակին,«Հայոց պատմության հարցեր», Գիտական հոդվածների ժողովածու, հ. 9, Եր., 2008, էջ124-137:
22. Հայրապետյան Ա., Ժողովրդագրական գործընթացները Գյումրի-Ալեքսանդրապոլում (XIX դար), Հայոց պատմության հարցեր, Գիտական հոդվածների ժողովածու, հ. 10, Երևան, 2008:
23. Հայրապետյան Ա., Գյումրի-Ալեքսանդրապոլի էթնոժողովրդագրական պատկերը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 11, Գյումրի, 2008, (0.6 հրատ մամուլ, հանձնված է տպագրության):
24. Հայրապետյան Ա., Նոր վավերագրեր Ալեքսանդրապոլի գավառի XIXդ. 80-ական թթ. ժողովրդագրական դրության մասին, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություներ», հ. 11, Գյումրի, 2008, (0.8 հրատ մամուլ, հանձնված է տպագրության):
25. Աթանեսյան Լ., Աթոն մեր Սեզանն է, «Գեղարվեստական միտք», 1, Եր., 2008, էջ 48-54:
26. Աթանեսյան Լ., Հին Գյումրի երգիծական շարքը, «Համայնապատկեր», թիվ 45, Լոս-Անջելես, 2008, էջ 55:
27. Աթանեսյան Լ., Գույնի ու խոսքի ներդաշնակությունը հայկական հեքիաթներում, «Հեքիաթագիտության առաջին գիտաժողով Հայաստանում», 2009, (0.3 հրատ մամուլ, հանձնված է տպագրության):
28. Աթանեսյան Լ., Գյումրու կերպարվեստի պատմությունից, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 11, Գյումրի, 2008, (0.3 հրատ մամուլ, հանձնված է տպագրության):
29. Ալեքսանյան Կ., Խորհրդային իշխանության ամրապնդումը Ալեքսանդրապոլի գավառում /1921թ ապրիլ-դեկտեմբեր/, փաստաթղթերի հավաքածու, «Բանբեր Հայաստանի արխիվների», Եր., 2008, թիվ 1, էջ 73-91:
30. Ալեքսանյան Կ., Գաղթականներն Ալեքսանդրապոլի գավառում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին /1914-1918թթ./ ,փաստաթղթերի հավաքածու, «Բանբեր Հայաստանի արխիվների», Եր., 2008, թիվ 2, էջ 60-85:
31. Ալեքսանյան Կ., Ալեքսանդրապոլի անկումը, Կարսի սցենար, «Ազգային գաղափար», 2008, թիվ 5, էջ 63-70:
32. Ալեքսանյան Կ., Տեղական իշխանության մարմինների ձևավորումը Ալեքսանդրապոլում, /1918թ. դեկտեմբեր-1920թ. մայիս/, «Ազգային գաղափար», 2008, թիվ 6, էջ 65-70:
33. Ալեքսանյան Կ., ՀՀ կենտրոնական և Ալեքսանդրապոլի տեղական իշխանության մարմինների հարաբերությունները 1918-1920թթ., ԳՊՄԻ տարեկան հանրապետական գիտաժողովի նյութեր, Գյումրի, 2008, (0.4 հրատ. մամուլ, հանձնված է տպագրության):

34. Ալեքսանյան Կ., Տեղական իշխանության մարմինների ընտրություններն Ալեքսանդրապոլում 1919թ. մայիսին, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», h. 11, Գյումրի, 2008, (0.3 հրատ մամուլ, հանձնված է տպագրության):
35. Եգանյան Լ., Վաղբրոնզիդարյան շարժական օջախների միջնադարյան տարբերակներ Հայկաձորից, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», h. XI, Գյումրի,2008, (0.4 հրատ. մամուլ, հանձնված է տպագրության):
36. Եգանյան Լ., Կանացիակերպ աղաման Հայկաձրից, Revu des etudes aremenien, France, 2008, (0.3 հրատ. մամուլ, հանձնված է տպագրության): 2009
37. Եգանյան Լ., Շիրակի մարզի պատմամշակութային ժառանգության պահպանումը.
38. նկատառումներ Անի քաղաքի հուշարձանների վիճակի վերաբերյալ, «Հայկական մշակութային ժառանգության պահպանությունը Հայաստանի Հանրապետությունում և Արտերկրում», Եր., 2008, (0.4 հրատ. մամուլ, հանձնված է տպագրության): 2009
39. Խաչատրյան Հ.(համահեղինակներ Բ. Գասպարյան, Ա. Պետրոսյան, Դ. Զարդարյան, Ս. Նահապետյան), ЧЕЛОВЕК И ПЕЩЕРЫ (ВИДЫ ОРГАНИЗАЦИИ ЛАНДШАФТА), Արիզոնայի համալսարանի գիտական հանդես, 2008, (0.6 հրատ. մամուլ, հանձնված է տպագրության):
40. Խաչատրյան Հ.,Բնագիտական հուշարձանների թանգարանացման կարևորությունը Հայաստանում, Հայկական մշակութային ժառանգության պահպանությունը Հայաստանի Հանրապետությունում և Արտերկրում, Երևան, 2008, (0.4 հրատ. մամուլ, հանձնված է տպագրության):
41. Ակոպով Ա., Նորահայտ փաստաթղթեր Վրաստանի պատմության պետական կենտրոնական արխիվից, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», h. 11, Գյումրի, 2008, (0.3 հրատ. մամուլ, հանձնված է տպագրության):
42. Այվազյան Գ., Ալեքսանդրապոլը պետություն-եկեղեցի հարաբերությունների ոլորտում XIX դարի 60-70-ական թվականներին, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», h. 11, Գյումրի, 2008, (0.5 հրատ. մամուլ, հանձնված է տպագրության):
43. Սահակյան Կ., Հովհաննիսյան Ռ., «… Ձեռքս հիվանդի դեղ է», ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», h 10, Գյումրի, 2008, էջ 85-90:
44. Սահակյան Կ. ,Հովհաննիսյան Ռ., Արքետիպը հեքիաթներում և երազներում, «Հեքիաթագիտական առաջին գիտաժողովի նյութեր», Եր., 2008, (0.4 հրատ. մամուլ, հանձնված է տպագրության):
45. Բոյաջյան Ա., Լենինական-Գյումրիի բնակչության շարժընթացը 1950-2000թթ., թեկն. ատենախոսության սեղմագիր, Եր., 2008, 26 էջ:
46. Բազեյան Կ., Աղանյան Գ., Ռուսական մշակութային ազդեցության մի քանի դրսևորումներ Ալեքսանդրապոլի կենցաղում, «Մշակույթների երկխոսություն. հայ-ռուսական մշա-

կութային կապեր (պատմություն և արդիականություն)» միջազգային գիտաժողովի նյութեր, Գյումրի, 2008, էջ 199-204:

47. Բազեյան Կ., Արհեստն ու արհեստավորը հայկական հեքիաթում, «Հայաստանում հեքիաթագիտական առաջին գիտաժողովի նյութեր», Եր., 2008, (0.4 հրատ. մամուլ, հանձնված է տպագրության):
48. Բազեյան Կ., Ալեքսանդրապոլի ավանդական հացկերույթը և ուտեստը, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 11, 2008, (0.5 հրատ. մամուլ, հանձնված է տպագրության):
49. Աղանյան Գ., Ալեքսանդրապոլի արհեստները, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 11, 2008, (0.6 հրատ մամուլ, հանձնված է տպագրության):
50. Աղանյան Գ., ՇՀՀԿ «Գիտական աշխատություններ» ժողովածուի 1998-2007թթ. 10 հատորների մատենագրությունը, Գյումրի, 2008, (2 հրատ. մամուլ, հանձնված է տպագրության):
51. Բոյաջյան Ա., Շիրակի մարզի ուրբանիզացման գործընթացը XXդ. և XXIդ. սկզբին,ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 11, Գյումրի, 2008 (0.4 հրատ. մամուլ, հանձնված է տպագրության):

5. Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն ՊՈԱԿ,
տնօրեն՝ բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Սերգո Արտուշի Հայրապետյան,
գիտքարտուղար՝ արվեստագիտության թեկնածու Հասմիկ Հայկի Հարությունյան
ՇՀՀ կենտրոնի հասցեն՝ ք. Գյումրի, Գորկու 62, հեռ.՝ (0312) 5 61 73, e-mail : hkentron@mail.ru

6. Տվյալներ կադրերի մասին

ա) 1

բ) -

գ) 16

7. –

Հաստատում եմ՝

ՇՀՀ կենտրոնի գիտքարտուղար Հ. Հարությունյան

Աղյուսակ 1

Աղյուսակ 2

2008թ. ՀՀ ԳԱԱ թեմատիկայի ամփոփ տվյալներ

N	Գիտական հիմնարկներ	Թեմաների թիվը		
		Բազային	Թեմատիկ	Տնտ. պայմանագրեր
1	2	3	4	5
1	Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն ՊՈԱԿ	1	3	1

Աղյուսակ 3

Ինստիտուտի անցկացրած հանրապետական և միջազգային կոնֆերանսները, սիմպոզիումները և այլ գիտական միջոցառումներ

N	Միջոցառումները	Անցկացման վայրն ու ժամանակը, կազմակերպիչները	Մասնակիցների թիվը	
			ընդամենը	այդ թվում արտ. երկրներից
1	2	3	4	5
1	Սարոյանական ընթերցումներ (ԳՊՄԻ-ի հետ համատեղ)	Գյումրի, 30 մայիսի 2008	8	
2	«Վիկտոր Համբարձումյան-100» գիտական զեկուցումներ	Գյումրի, 20 սեպտեմբերի 2008	10	
3	88-ի երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված «Հայագիտությունը Շիրակում հետաղետյան 20 տարիներին» գիտական սիմպոլիում	Գյումրի, 22 նոյեմբերի 2008	12	

Աղյուսակ 4

Աղյուսակ 5

Արտասահմանյան գիտնականների ընդունելություն ԳԱԱ հիմնարկություններում

N	Հիմնարկությունը	Երկիրը	Ընդունված գիտնականների թվաքանակը		
			Գիտաժողովներին մասնակցելու համար	Համատեղ գիտական աշխատանք կատարելու համար	Բանակցությունների և կոնսուլտացիաների համար
1	2	3	4		5
1	ՇՀՀ կենտրոն	Ֆրանսիա, Գերմանիա			13

Աղյուսակ 6 –

Աղյուսակ 7

Աղյուսակ 8

ԳԱԱ գիտաշխատողների 2008 թ. հրապարակումների

ընդհանուր քանակը

N	Հիմնարկությունը	Մենագրություն, ժողովածու և այլն		Ուսումնական ձեռնարկ, դասագիրք և այլն		Հոդվածներ, զեկուցումներ թեզիսներ և այլն	
		Հանրա-պետ.	Արտա-սահմ.	Հանրա-պետ.	Արտա-սահմ.	Հանրապետ.	Արտա-սահմ.
1	2	3	4	5	6	7	8
	ՇՀՀ կենտրոն	**1**				**45**	**5**

Աղյուսակ 9

Ասպիրանտների թվաքանակը

Հիմնարկությունը	Ասպիրանտների քանակը (այդ թվում կանայք) առ 1.01.2008 թ.		Հաշվետու տարում ասպիրանտուրա են ընդունվել (այդ թվում կանայք)	
	ա/կ.	ա/չկ.	ա/կ.	ա/չկ.
1	2	3	4	5
ՇՀՀ կենտրոն	**1**	**2/2**		

Աղյուսակ 10 -

Աղյուսակ 11

ՀՀ ԳԱԱ աշխատողների թվաքանակի ամփոփ տվյալներ առ 01.01.2009թ.

N	Հիմնարկությունը	Աշխատողների ընդհանուր թիվը /այդ թվում կանայք/	Գիտական աշխատողների ընդհանուր թիվը /այդ թվում կանայք/	ԳԱԱ ակադե-միկոսներ /այդ թվում կանայք/	Գիտության դոկտորներ /այդ թվում կանայք/	Գիտության թեկնածուներ /այդ թվում կանայք/
1	2	3	4	5	6	7
	ՇՀՀ կենտրոն	22/13	17/10		2/0	8/6

ՇՀՀ կենտրոնի տնօրեն՝

բ.գ.դ., պրոֆեսոր **Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**